ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	ՀՕ-243-Ն
Տիպ	Օրենք
Ակտի տիպ	Հիմնական ակտ (22.07.2025-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2025.07.21-2025.08.03 Պաշտոնական հրապարակման օրը 21.07.2025
Ընդունող մարմին	ՀՀ Ազգային ժողով
Ընդունման ամսաթիվ	02.07.2025
Ստորագրող մարմին	ՀՀ Նախագահ
Ստորագրման ամսաթիվ	18.07.2025
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	22.07.2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2025 թվականի հուլիսի 2-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 72-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ և 12-րդ կետերով.

«11) եթե ոչ իրացման նպատակով 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո ձեռք են բերվել կամ ներմուծվել են թեթև մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ թեթև մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար: Սույն կետի կիրառության իմաստով համարվում է, որ թեթև մարդատար ավտոմեքենան ձեռք է բերվել կամ ներմուծվել է ոչ իրացման նպատակով, եթե ավտոմեքենայի սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով ստացել է պետական գրանցում.

12) եթե 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո լիզինգի (տարատեսակների) պայմանագրերով ստացվել են թեթև մարդատար ավտոմեքենաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ թեթև մարդատար ավտոմեքենաներն օգտագործվում են վարձույթով տրամադրելու համար:»:

Հոդված 2. Օրենսգրքի 73-րդ հոդվածում՝

1) 8.1-ին մասում՝

ա. առաջին պարբերությունը «ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցի, բացառությամբ» բառերից առաջ լրացնել «2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը ներառյալ ձեռք բերված կամ ներմուծված՝» բառերով,

բ. երկրորդ պարբերությունը «առանձնացված» բառից հետո լրացնել «՝ հաշվանցված (պակասեցված)» բառերով,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը ներառյալ ձեռք բերված կամ ներմուծված՝ վարձույթով տրամադրելու նպատակով օգտագործված՝ ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող տրանսպորտային միջոցի՝ Հայաստանի Հանրապետությունում մատակարարման մասով սույն մասի համաձայն ԱԱՀ-ի բացասական տարբերությունը հաշվարկելիս տվյալ տրանսպորտային միջոցի՝ Հայաստանի Հանրապետությունում մատակարարման գործարքի մասով հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարին ավելացվում են նաև տվյալ տրանսպորտային միջոցի վարձույթով տրամադրման ծառայության մասով Օրենսգրքով սահմանված կարգով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ հաշվարկային փաստաթղթերով տվյալ տրանսպորտային միջոցը նույնականացնող տվյալների առկայության դեպքում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.2-րդ մասով.

«8.2. Եթե ոչ իրացման նպատակով 2025 թվականի օգոստոսի 1-ից հետո ձեռք բերված կամ ներմուծված թեթև մարդատար ավտոմեքենաների մասով ԱԱՀ-ի գումարներն Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն նվազեցվել են հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներից, ապա տվյալ ավտոմեքենայի հետագա օտարման դեպքում նախկինում չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարներն ավելացվում են թեթև մարդատար ավտոմեքենայի օտարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին՝ տվյալ թեթև մարդատար ավտոմեքենայի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկված գումարի չափով, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ թեթև մարդատար ավտոմեքենայի օտարումն ԱԱՀ-ով հարկվող գործարք է:

Սույն մասով սահմանված դեպքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ԱԱՀ-ի գումարների ավելացումը կատարվում է, եթե թեթև մարդատար ավտոմեքենայի օտարման պահին օտարողը, Օրենսգրքի համաձայն, համարվում է ԱԱՀ վճարող՝ անկախ թեթև մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման կամ ներմուծման պահին ԱԱՀ վճարող համարվելու հանգամանքից:»:

Հոդված 3. Օրենսգրքի 109-րդ հոդվածում՝

1) 1.2-րդ մասը «դիլեր չհանդիսացող» բառերից հետո լրացնել «կամ լիզինգատու չհանդիսացող» բառերով.

2) 1.2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը «նպատակով» բառից հետո լրացնել «2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը ներառյալ» բառերով:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը և 3-րդ հոդվածի 1-ին կետը տարածվում են 2023 թվականի դեկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների

նկատմամբ:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

2025 թ. հուլիսի 18
Երևան
ՀՕ-243-Ն

Պաշտոնական հրապարակման օրը՝ 21 հուլիսի 2025 թվական: